

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության գործերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով հայ և վրացի ժողովուրդների միջև մշակույթի բնագավառում բարեկամական համագործակցության և փոխգործակցության ձգտումով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի կառավարությունների միջև մշակույթի, գիտության և հումանիտար բնագավառներում համագործակցության մասին 1993 թվականի մայիսի 19-ին ստորագրված համաձայնագիրը,

համաձայնեցին համագործակցել հետևյալ ուղղություններով.

Հոդված 1

Կողմերը կաջակցեն և կխրախուսեն երկու երկրների համապատասխան հաստատությունների և կազմակերպությունների միջև տեղեկությունների և մասնագետների փոխանակումը, ինչպես նաև գրականության, թատրոնի, կինեմատոգրաֆիայի, երաժշտության, կերպարվեստի, թանգարանների, գրադարանային գործի, հրատարակչության, հուշարձանների և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բնագավառներում համագործակցությունը:

Հոդված 2

Կողմերը կխրախուսեն փոխադարձ մասնակցությունն իրենց երկրներում կազմակերպվող մշակութային միջոցառումներին, այդ թվում՝ երաժշտական,

ֆիլմերի, պարարվեստի և թատերական փառատոներին, մրցույթներին և աշխատաժողովներին:

Հոդված 3

Կողմերը կիրականացնեն թատրոնի պրոդյուսերների փոխանակումներ՝ իրենց երկրներում թատերական ներկայացումներ բեմադրելու նպատակով: Փոխանակման պայմանները կհստակեցվեն երկու երկրների շահագրգիռ կազմակերպությունների միջև:

Հոդված 4

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են կազմակերպել սույն Ծրագրի նպատակներին համապատասխանող այլ միջոցառումներ, ինչպես նաև խրախուսել մշակութային համագործակցության բնագավառում մասնավոր նախաձեռնությունները:

Հոդված 5

Կողմերը կաջակցեն հայ և վրացի գեղարվեստի մասնագետների փոխանակմանը, այդ թվում՝ երիտասարդ արվեստագետների փոխադարձ ցուցահանդեսներին:

Հոդված 6

Կողմերն իրենց իրավասության սահմաններում կնպաստեն համատեղ ֆիլմերի ստեղծմանը, կինեմատոգրաֆիայի ոլորտում համատեղ ստեղծագործական ծրագրերի իրականացմանը և բնագավառի մասնագետների փոխանակմանը:

Հոդված 7

Կողմերը կաջակցեն մշակույթի և արվեստի բնագավառների բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների միջև անմիջական հաղորդակցության հաստատմանը, ինչպես նաև նշված բնագավառների մասնագետների փոխանակմանը:

Հոդված 8

Կողմերը կխրախուսեն մշակութային կրթության ոլորտում համագործակցությունը՝ իրենց երկրներում մանկապատանեկան միջոցառումներ իրականացնելու համար հայ և վրացի շնորհալի երեխաների փոխանակմանն աջակցելու միջոցով:

Հոդված 9

Կողմերը կդիտարկեն «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի, ինչպես նաև Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի շրջանակներում համատեղ համագործակցության հնարավորությունը:

Հոդված 10

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը գրական ստեղծագործությունների թարգմանության և հրատարակման գործում:

Հոդված 11

Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն ոչ նյութական մշակութային ժառանգության, պատմության և մշակույթի հուշարձանների պաշտպանության, ուսումնասիրության և հանրահռչակման բնագավառներում պետական մակարդակով համագործակցության զարգացման համար:

Հոդված 12

Կողմերն իրենց իրավասությունների շրջանակում կնպաստեն պատմության և մշակույթի հուշարձանների ճանաչման, գույքագրման, պահպանման/վերականգնման և պաշտպանության համար պատասխանատու հաստատությունների միջև անմիջական հաղորդակցության հաստատմանը, ինչպես նաև կխրախուսեն ազգային օրենքների և այլ նորմատիվ ակտերի մասին տեղեկությունների փոխանակումը:

Հոդված 13

Կողմերը կշարունակեն պատմական և մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված իրենց համագործակցությունը, այդ թվում՝ նպաստելով համատեղ աշխատանքային խմբերի աշխատանքների իրականացմանը: Կողմերը հանձն կառնեն լիարժեք և ժամանակին նախապատրաստել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հուշարձանների վերականգնման մասին փաստաթղթերի փաթեթներ, ինչպես նաև ապահովել երկու երկրների փորձագետների մասնակցությունը վերականգնման աշխատանքներին և հնագիտական արշավախմբերին:

Հոդված 14

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը մշակութային արժեքների ապօրինի ներմուծման և արտահանման դեմ պայքարում:

Հոդված 15

Հաշվի առնելով իրենց երկրների առաջնահերթությունները՝ Կողմերը կհամագործակցեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրավասության ներքո գտնվող հարցերի շրջանակներում:

Հոդված 16

Կողմերը կիրականացնեն մշակույթի բնագավառում փոխանակումներ հետևյալ պայմաններով.

ա) ստեղծագործական խմբերի, պատվիրակությունների և անհատների դեպքում՝

- հյուրընկալող Կողմը, իր ազգային օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան, կհոգա կեցության, սննդի, ներքին փոխադրման ծախսերը, ինչպես նաև կապահովի միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ սրահները և հարթակները.

- ուղարկող Կողմը կհոգա երկկողմանի ուղևորության ծախսերը (այդ թվում՝ բեռների և անհրաժեշտ իրերի փոխադրման):

բ) թանգարանային հավաքածուների, ինչպես նաև ժամանակակից արվեստի ցուցահանդեսների անցկացման պայմանները, ժամկետները, բովանդակությունը, ցուցադրության վայրերը և ապահովագրության ծախսերը կհստակեցվեն առանձին համաձայնագրերով:

Հոդված 17

Այլ առանձին համաձայնագրերի բացակայության դեպքում մասնագետների փոխանակումները կիրականացվեն հետևյալ պայմաններով.

- ուղարկող Կողմը կհոգա միջազգային փոխադրման և ապահովագրության ծախսերը,
- հյուրընկալող Կողմը կհոգա կեցության, սննդի և ներքին փոխադրումների ծախսերը, ինչպես նաև իր ազգային օրենսդրությանը համապատասխան կապահովի առաջին օգնություն:

Հոդված 18

Կողմերի ցանկությամբ և փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կազմվում են որպես առանձին փաստաթուղթ, կազմում են սույն Ծրագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Ծրագրի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 19

Սույն Ծրագրի կիրարկման կամ մեկնաբանության ժամանակ առաջացած տարաձայնությունները Կողմերի միջև կկարգավորվեն դիվանագիտական ուղիներով փոխադարձ խորհրդատվությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 20

Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման պահից և գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:


Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Ծրագրի գործողության ժամկետը մյուս Կողմին գրավոր ծանուցում ներկայացնելով դիվանագիտական

կապուղիներով: Սույն Ծրագրի դադարեցումն ուժի մեջ է մտնում մյուս Կողմից վերոնշյալ ծանուցումը ստանալուց օրվանից: Սույն Ծրագրի դադարեցումը չի ազդում ծրագրի շրջանակներում որևէ ընթացիկ Ծրագրի կամ նախագծի իրականացման վրա, եթե Կողմերը որևէ այլ որոշում չկայացնեն:

Սույն Ծրագրի դրույթներն իրականացվում են Կողմերի ազգային օրենսդրության և ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

Կատարված է Երևանում 2022 թ. հուլիսի 11-ին, երկու (2) բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարածայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարության կողմից՝



Վրաստանի մշակույթի, սպորտի և
երիտասարդության գործերի
նախարարության կողմից՝

